

ջերս գրուած էր զուկա թիրեաքեանի ջանքերն ու պահլաւ լեզուին նուիրած աշխատութիւնները :

Գիշ ժամանակէն «Բանասէր»ի յատուկ տպարանէն լոյս կը տեսնէ դուկա թիրեաքեանի լեզուարանական հմտալից եւ շատ հետաքրքրական մէկ գիրքը, որ կը կրէ հետեւեալ տխուղութիւնը . «Արատաշիր Բարական, Կարնամակ : Պահլաւ բնագրէն թարգմանեց հանդերձ ծանօթութեամբ՝ Տօքթ. Թիրեաքեանը :

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ



### ՆԵՐՍԷՍ ԱՇՏՆԱՐԱԿԵՅՈՒ ԿԱՆԴԱՅԵՆԵՐԸ

Դուրէ՛ ժէն Մեսրոպ վ. Մարտիգեանց զրկած է մեզ ներսէս Աշտարակեցիի 20 կոնդակը, «Բանասէր»ի մէջ հրատարակելու համար : Այդ կոնդակները գրուած են 1850 հոկտ. 10էն մինչեւ 1856 սեպ. 8 : Ներկայ պրակէն սկսելով մէկիկ մէկիկ կը հրատարակենք զանոնք, մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով բարձրապատիւ Մեսրոպ վարդապետին :

#### Գերասաիճան Ազիզ Խան

Երախտիք եւ բարեբարութիւնք ցուցնալք ի հանդուցեալ Արաս Միրզայէ առ սուրբ աթոռն էջմիածին եւ յատկապէս առ մեզ, ո՛չ կլանեն երբէք ի մտացս, եւ պարտաւոր համարեմ զանձն իմ լինել առ նա եւ առ յետագայս նորա միշտ երախտագէտ, եւ յուսամք իսկ զի եւ Նորին Արքայական բարձրութիւնն ներկայ վեհափառ Շահն թոռն Արաս Միրզայի հետեւեալ շաւղաց նախնւոյն իւրոյ, ոչ արասցէ անպակաս ի մէնջ գթազցր շնորհս իւր :

Առաքեցի առ գերասաիճանութիւն Ձեր գլխակ եպիսկոպոսն Ազիրբէժանի եւ զԹաղգէոս եպիսկոպոսն Ասպահանու, առ ի ներկայանալ Ձերում գերասաիճանութեան եւ ծանօթանալ ընդ Ձեզ, որ պարտին գնալ ի Պարսս ի նշտնակեալ տեղիս, եւ վայելել անդր զշնորհ Ձեր եւ այլոց մեծամեծաց զրանն վեհափառ Շահին, եւ որովհետեւ յառաջնում զալստեան ձերում խոստացաք զի յետ չուելոյն թագաւոր ժառանգին շնորհ բերել ի սուրբ էջմիածին վասնորոյ խնդրեմք այժմ շնորհ բերել առ ի վայելել զտեսութիւն ձեր, եւ զայսմանէ եւս զրեցի պրն վօյննի գուբեռնաթորին Երեւանայ : զի եւ նորին գերազանցութիւնն շնորհ բերցէ ընդ Ձեզ :

Ի 10 հոկտեմբերի 1850 ամբ.  
Ի սուրբ էջմիածին :

Կաթողիկոս ամենայն Հայոց  
Ներսէս